

ՀԱՅ ԹԵՐԹԵՐՈՒՆ

ՍԻՈՆԻ հետ բաւական թիւով հայ թերթեր կը փոխանակուին: Մենք կը փափաքինք ՍԻՈՆը փոխանակել բոլոր հայ թերթերու հետ, ըլլան ամէնօրեայ, ըլլան պարբերական, եւ այս կերպով, եթէ կարելի է, կ'ստանան հաւաքածոները կազմել Ս. Յակոբ Մասենադարանին մէջ այդ բոլոր հրատարակութեանց. որովհետեւ Ս. Յակոբի Մասենադարանը զլիաւորն է այն կեդրոններուն, ուր ապահովապէս կրնան պահուիլ այդպիսի հաւաքածոներ, որոնք օր մը պէտք պիտի ըլլան իբրեւ աղբիւր այլեւայլ արդիւններու համար:

Այս է բուն պատճառը որ կ'ուզենք հայ մամուլի բոլոր արտադրութիւնները ունենալ, եւ կը փափաքինք որ հայ թերթերը նկատի առնեն այս կէտը, նոյն իսկ իրենց օգտին համար. որովհետեւ շատ անգամ թերթ հրատարակողներ չեն կրնար կազմել իրենց թերթին հաւաքածոն եւ պահել:

ՍԻՈՆ երկու տարի բոլորեց, եւ այս երկու տարուան ընթացքին ան փոխանակուեցաւ շարք մը թերթերու հետ, որոնց ցանկը հրատարակուեցաւ իր կողմերուն վրայ. բայց, դժբախտաբար, ՍԻՈՆի փոխարէն մեզի դրկուած թերթերէն ոմանք ընդհատուցներ ունեցան, եւ այս թերթիւններուն հետեւանալով այդ թերթերուն հաւաքածոները պակասաւոր մնացին, որով շատ բան կը կորսնցնեն ասոնք իրենց արժէքէն:

Այս դիտողութիւններու հետ կ'ուզենք հայ թերթերուն ուշադրութեան յանձնել հետեւեալ կէտերն ալ:

Քանի որ ՍԻՈՆի հետ փոխանակուած թերթերու հաւաքածոն կը պահուի Ս. Յակոբի Մասենադարանին մէջ.

1.—Պէտք է որ դրկուած թերթեր աւրուած կամ սխալ տպագրուած երեսներ ու էջեր չունենան:

2.—Պէտք է որ դրկուած թերթեր էլլէ պակաս թիւեր չունենան. որովհետեւ շատ կը պատահի որ թերթի մը միեւնոյն թիւէն երկու հաս ծալուած կուգան, որով բուն թիւը կը պակսի:

3.—Թերթեր կուգան ՍԻՈՆի, որոնք գործածուածի պէս են, մասինով քուսնեաններ, նօթեր գրուած են լուսանցքներու վրայ եւ ւարուած:

4.—Թերթեր կուգան, որոնց մէկ երեսը վերէն վար, կամ ծայրէն պատռուած է եւ կամ ծայրը ծալուած եւ այնպէս տպագրուած է:

5.—Թերթեր կուգան որոնք գէշ ծալուած եւ նմարկուած են, եւ յանախ խոռոք թերթ մը այնքան ծալուած եւ այնքան գծուած պատշաժ մը մէջ փաթկուած է որ թերթը *փաշալիւ* դարձած կը հասնի մեր ձեռքը:

6.—Կարգ մը թերթերէն ալ, միայն մէկ երկու թիւ եկած են, եւ ա՛յլ ընդհատուած է ասոնց փոխանակութիւնը, եւ այս ընդհատումին պատճառը չեն իմացուցած մեզի:

ՍԻՌՆԻ խմբագրութիւնը. իր Նոր Շրջանին այս երրորդ տարւոյն ըսկիզբը, պարտք կ'զգայ այս կէտերուն վրայ հրաւիրել ՍԻՌՆԻ հետքեր փոխանակողներուն ուշադրութիւնը, այն յուսով որ գոնէ այս Տարի փոխանակուած քերթերուն մասնաւոր խնամք տարուի, որպէս զի առնց հաւաքածոն մաքուր եւ անքերի ըլլայ:

Մենք տեւէ քերթ չենք նետեր մէկդի, չենք փնացներ, այլ կը պահենք, եւ կը փափաքինք որ ՍԻՌՆԻ հասցէին ղրկուած քերթեր պահուելու արժանի վիճակի մը մէջ հասնին մեր ձեռքը:

Այս առթիւ կոչ կ'ընենք այն քերթերուն եւ հանդէսներուն, որոնք ղեռ չեն փոխանակուած ՍԻՌՆԻ հետ, եւ կը փափաքինք որ փոխանակեն:

Կոչ կ'ընենք դարձեալ հեղինակներուն եւ հրատարակիչներուն, որպէս զի իրենց գործերէն երկ երկու օրինակ ղրկեն ՍԻՌՆԻ հասցէին, որոնց մէկը ուղղակի Մասեմադարանը կը մտնէ եւ կը պահուի, իսկ միւսը կը տրամադրուի անմիջական ընթերցումի:

Ղրկուած գիրքերուն լիակատար ցանկը կը հրատարակուի ՍԻՌՆԻ կողմէն միայն, եւ ի հարկին մասեմախօսականներ ալ կը գրուին առնց մասին:

Խմբագրութիւն ՍԻՌՆԻ

ՍԻՌՆԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ ԵՒ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

ՍԻՌՆԻ Վարչութիւնը ստիպւած չէ իր ատեն թիւին մէջ ազդարարել իր բաժանորդներուն որ բարեհաճին իրենց բաժնեկիները վճարել, երբ չեն վճարած տարւան սկիզբը կաւ իրենց բաժանորդ գրած ստիպում:

Բայց ՍԻՌՆԻ հրատարակութեան այս երրորդ Տարւոյն սկիզբը պարտք կը հաւարինք զգացնել մեր բոլոր բաժանորդներուն թէ իրենց պարտականաւորութիւնը մեծապէս պիտի դիւրացնէ ՍԻՌՆԻ դրամական գործառնութիւնները:

ՍԻՌՆ գրեթէ ձրի քերթ մըն է մեր բաժանորդներուն համար. որովհետեւ ՀԱՐԻՒՐ ՅԻՍՈՒՆ ՍԻՆԹԻՆ (= 30 դր. եղիպտական, = 6 շիլլին անգլիական) բառասունը միայն փոսթին կը տուի:

ՍԻՌՆԻ խմբագիրները եւ աշխատակիցները սենք մը վարձք չեն ստանար. եւ այդ է պատճառը որ հազիւ իր հրատարակութեան եւ փոսթի ծախքերը համեմատ չափ տարեկան բաժնեկի մը նշանակուած է ՍԻՌՆԻ համար:

ՍԻՌՆԻ Վարչութիւնը մեծապէս երախտաւոր պիտի ըլլայ երբ իր բաժանորդները, ոչ թէ իբրեւ բաժանորդ, այլ իբրեւ բարեկամ կատարեն իրենց պարտքը, միշտ ժառանգակի:

Բարեկամական ֆաշիզմաւոր ապացոյց պիտի հաւարինք նաեւ, երբ ՍԻՌՆԻ բաժանորդներ եւ ընթերցողներ, ՍԻՌՆԻ համար նոր բաժանորդներ գտնեն իրենց շրջանակներուն մէջ: Ասիկա մասնաւոր պարտականութիւն մը պիտի է նկատուի մանաւանդ մեր այն ընթերցողներուն, որոնք իբրեւ նուէր կ'ստանան ՍԻՌՆը:

ՍԻՌՆ ՆՈՒՒՐՈՂՆԵՐՈՒ

ՍԻՌՆԻ Վարչութիւնը մեծապէս կը գնահատէ ֆաշիզմաւոր իր այն բարեկամներուն, որոնք ՍԻՌՆԻ նուիրեցիկ իրենց ծանօթներուն եւ կաւ գումարներ դրին ուղղակի ՍԻՌՆԻ Վարչութեան ձեռքին տակ, որպէս զի յարմար դատուած տեղերու եւ արժանաւոր անձերու ՍԻՌՆ ղրկուի:

Յուսով ենք որ այս տարի ալ ՍԻՌՆ պիտի փայտի իր նուիրատուներուն հաւակրակիին եւ վստահութեան հնչուն ապացոյցը, որով ՍԻՌՆԻ Վարչութիւնը դիւրութիւն պիտի ունենայ հարկ եղած տեղեր ՍԻՌՆ ղրկելու:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՍԻՌՆԻ

ՍԻՈՆ ՆՈՒԻՐՈՂՆԵՐ 1929-Ի ՀԱՄԱՐ

ԵՐՈՒՍԱԴԷՄԷՆ՝ Հայրապետեան Տ. Մուշեղ վրդ. Մասիկեան Զաքարիոն՝ Գահիրէ, Իսրայէլեան Տ. Կիւրեղ վրդ.՝ Իսրայէլեան Տ. Մաշթոց Քնյ. ին՝ Սպահան, Պիւլպիւլեան Տ. Գարեգին Աբեղայ՝ Թօփալեան Բիւզանդին՝ Հալէպ, Նշանեան Աշոտ՝

Քիւրքճեան Ստեփանին՝ Սօֆիա եւ Բէօլէեան Տկ. Բարիսին՝ Երուսաղէմ, Բէշիշեան Զարմայր՝ Փիրանեան Տիգրանին՝ Հալէպ, Եաղուպեան Յակոբճան՝ Ֆէրմանեան Գրիգորին՝ Իսկէնտէրուն եւ Համբարձումեան Սեղրոսին՝ Պաղտատ:

Ս Ի Ո Ն

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Բոլոր երկիրներու համար՝ ՍԻՈՆի Տարեկան բաժնեգիրն է

Եգիպտական	Ղրուշ	30
Անգլիական	Շէլին	6
Ամերիկեան	Տօլար	1, 50

Եռամսեայ կամ վեցամսեայ բաժանորդագրութիւն չկայ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԽԻԿ Է

ՍԻՈՆի իւրաքանչիւր թիւը Երուսաղէմի մէջ կը վաճառուի 2, 5 Դնկնի.

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Գործառնութեանց ղեւրութեան համար կը խնդրուի ՍԻՈՆի աշխատակիցներէն եւ բաժանորդներէն որ բաժանորդագրական, տպարանական, դրամական, եւայլն խնդիրներու եւ գործերու համար ղիմեն ուղղակի մեր Տպարանի Տեսչութեան, սա՛ հասցէով.

Direction de l'Imprimerie du Patriarcat Arménien

JÉRUSALEM—Palestine

Իսկ խմբագրական գործերու համար ղիմել ուղղակի Խմբագրութեան, սա՛ հասցէով.

Rédaction de la Revue Arménienne SION

Patriarcat Arménien

JÉRUSALEM — Palestine